Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1224-22.12.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնահատման գործունեության մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում լրացնել նոր 2-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«2. Գնահատման գործունեության ոլորտում Կառավարությունն իրավասու է հաստատել եւ իրականացնել գնահատման գործունեության ոլորտի ծրագրեր եւ հայեցակարգեր:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) **լիազոր մարմին՝** սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործունեության ոլորտը կարգավորող եւ վերահսկող, ֆիզիկական անձանց գնահատման մասնագիտական որակավորում (այսուհետ՝ Որակավորում) իրականացնող, որակավորման վկայականի գործողությունը կասեցնող եւ դադարեցնող, գնահատման գործունեություն իրականացնելու նպատակով գնահատողներին, գնահատման կազմակերպություններին (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող), ինչպես նաեւ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններին հաշվառող եւ հաշվառումից հանող լիազոր մարմին.»,

3) 8-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8) **գնահատման առաջադրանք՝** պատվիրատուի կողմից գնահատողին ներկայացվող առաջադրանք, որում արտացոլվում են գնահատվող օբյեկտի

նույնականացման տվյալները, գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաեւ գնահատման արժեքի տեսակը, գնահատման նպատակը, եւ գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքների տեսակը.»,

4) 11-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«11) **գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագիր՝** լիազոր մարմնի ներդրած առցանց աշխատող էլեկտրոնային տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ Հաշվառման ծրագիր), որտեղ մուտքագրվում են անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ սույն օրենքով սահմանված տվյալները, իսկ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված՝ անշարժ գույքի գնահատման պարտադիր դեպքերում՝ նաեւ անշարժ գույքի գնահատման հաշվետվությունները.»,

5) 17-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

6) լրացնել նոր 18-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«18) **հաշվառում՝** լիազոր մարմնի կողմից որակավորված անձանց, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաեւ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններին սույն օրենքով սահմանված դիմումի եւ փաստաթղթերի հիմքով Հաշվառման ծրագրում ներառելը եւ սույն օրենքով սահմանված պահանջների ապահովման դեպքում Հաշվառման ծրագիրը կիրառելու նպատակով հասանելություն տրամադրելը:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «գաղտնաբառը» բառից հետո լրացնել «գնահատման» բառը,

2) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հաշվառման ծրագիր մուտք են գործում «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով:»,

3) լրացնել նոր 1.1-ին մաս հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Գնահատողի կողմից սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պայմանագիրը՝ անշարժ գույքի դեպքում, կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հաշվառման ծրագիր պարտադիր ենթակա են մուտքագրման այդ պայմանագրի անբաժանելի հավելված հանդիսացող գնահատման առաջադրանքը,

գնահատման նպատակը եւ գնահատման ենթակա օբյեկտի հասցեն, որի վերաբերյալ համակարգը գեներացնում է համապատասխան նույնականացնող տվյալներ պարունակող քաղվածք: Սույն մասով սահմանված պայմանագրի հիման վրա գնահատման հաշվետվություն կազմելուց հետո գնահատողի կողմից Հաշվառման ծրագիր պարտադիր ենթակա են մուտքագրման անշարժ գույքի վերաբերյալ իր կազմած յուրաքանչյուր գնահատման հաշվետվության վերաբերյալ հետեւյալ տվյալները՝

1) գնահատված օբյեկտի հասցեն.

2) գնահատման նպատակը, պայմանագրի անբաժանելի հավելված հանդիսացող գնահատման առաջադրանքը.

3) գնահատման ամսաթիվը.

4) գնահատված արժեքը.

5) գնահատված օբյեկտի վերաբերյալ առկա այն սահմանափակումները, որոնք ազդել են արժեքի որոշման վրա.

6) գնահատված օբյեկտի տեղազննության արձանագրությունը:»,

4) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Յուրաքանչյուր գնահատման հաշվետվություն կամ հաշվետվության վերաբերյալ տվյալներ Հաշվառման ծրագիր մուտքագրելիս ինքնաշխատ ձեւավորվում է հաշվետվությունը նույնականացնող անհատական ծածկագիր: Հաշվառման ծրագրում հաշվետվության տվյալների մուտքագրումը փաստում է հաշվետվության գոյության մասին: Հաշվետվության վերաբերյալ տվյալները Հաշվառման ծրագիր մուտքագրված չլինելու դեպքում տվյալ հաշվետվությունը չի կարող օգտագործվել որպես գնահատման հաշվետվություն:»,

5) 3-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդայությամբ.

«Սույն հոդվածի 1.1-ին եւ 2-րդ մասերով սահմանված պահանջները չեն տարածվում պետական մարմինների կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գաղտնի կամ հրապարակման ոչ ենթական վարույթի, ուսումնասիրության կամ գործի շրջանակում պատվիրված եւ կազմված գնահատման հաշվետվությունների վրա: Սույն մասով սահմանված

տվյալները Հաշվառման ծրագիր մուտքագրելու դեպքում պատասխանատվությունը կրում է գնահատողը:»,

6) լրացնել նոր 5-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«5. Սույն օրենքով սահմանված կարգով վկայականի կասեցման դեպքում գնահատողին կարող է տրամադրվել Հաշվառման ծրագրի կիրառման սահմանափակ հասանելիություն՝ բացառապես այն դեպքում, երբ Հաշվառման ծրագրում առկա է գնահատողի կողմից մուտքագրված ընթացիկ գնահատման առաջադրանք, որի կապակցությամբ պատվիրատուն սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով սահմանված կարգով պահանջել է շարունակել պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:»:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի.

1) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Գնահատման առաջադրանքը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի հավելվածը:»,

2) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) գնահատման դիմաց վճարի չափի, ինչպես նաեւ գնահատման հաշվետվության կազմման համար անհրաժեշտ տեղեկությունների, փաստաթղթերի ձեռքբերման պետական տուրքի եւ այլ վճարների չափի վերաբերյալ, որը չի ներառվում գնահատման դիմաց վճարի գումարի մեջ եւ ըստ անհրաժեշտ տեղեկությունների եւ փաստաթղթերի ձեռքբերման դիմաց վճարման ենթակա պետական տուրքի եւ այլ վճարների չափի փոփոխության, կարող է փոփոխվել եւ ենթակա է վճարման պատվիրատուի կողմից.»,

3) 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) պատվիրատուին ուղղված ծանուցում՝ սույն օրենքի համաձայն պայմանագրի կնքման հիմքով պատվիրատուի անունից գնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու մասով գնահատողին լիազորություն ընձեռելու վերաբերյալ.»,

4) 2-րդ մասում լրացնել նոր 5-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«5) գնահատվող օբյեկտի վերաբերյալ պատվիրատուի կողմից Պայմանագրի կնքման պահին տրամադրված տեղեկությունների եւ փաստաթղթերի ամբողջական ցանկի վերաբերյալ:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածում.

1) 2-րդ մասի առաջին նախադասությունում «աշխատանքային» բառից հետո լրացնել «կամ ծառայությունների մատուցման» բառերը, իսկ «պայմանագրի վերաբերյալ տեղեկանքի» բառերից առաջ՝ «եւ ծառայությունների մատուցման» բառերը,

2) 8-րդ մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

3) 8-րդ մասը լրացնել նոր 5-6-րդ կետերով հետեւյալ բովանդակությամբ.

«5) որակավորման վկայականի գործողության կասեցման դեպքում.

6) սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով նախատեսված պահանջը խախտելու դեպքում:»,

4) լրացնել նոր 8.2-8.4-րդ մասեր հետեւյալ բովանդակությամբ.

«8.2. Սույն հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում անձն իրավունք ունի նոր դիմում ներկայացնելու որպես գնահատող հաշվառում ստանալու համար միայն հաշվառումից հանվելուց վեց ամիս հետո, եթե հաշվառումից դուրս գալու դիմում ներկայացնելու պահին հանդիսացել է մասնագիտական կամ որակավորման հանձնաժողովի անդամ:

8.3. Սույն հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում անձն իրավունք ունի նոր դիմում ներկայացնելու որպես գնահատող հաշվառում ստանալու համար միայն սույն օրենքով նախատեսված հիմքերի վերացման դեպքերում:

8.4. Սույն հոդվածի 8-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում գնահատողն իրավունք ունի հաշվառում ստանալու նոր դիմում ներկայացնելու միայն հիմքերի վերացումից հետո:»,

5) 11-րդ մասի 3-րդ կետում «1-ին մասի 5-7-րդ» բառերը փոխարինել «11-րդ մասի 1-ին եւ 6-րդ» բառերով,

6) 13-րդ մասից հանել «եւ 3-րդ» բառերը, «կետերով» բառը փոխարինել «կետով» բառով, իսկ «հիմքերով» բառը՝ «հիմքով» բառով,

7) լրացնել նոր 14-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«14. Սույն հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքերով հաշվառումից հանվելու դեպքում գնահատման կազմակերպությունն այլեւս չի կարող հաշվառվել լիազոր մարմնում:»:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածի.

1) 1-ին մասում «գրավոր» բառը փոխարինել «բացառապես էլեկտրոնային» բառերով,

2) 2-րդ եւ 3-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Գնահատման հաշվետվությունը ստորագրում է գնահատողը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. Գնահատման հաշվետվությունը հաստատվում է գնահատողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ (անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում), իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ այն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հետ գնահատողը կնքել է աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիր, ինչպես նաեւ նշվում է էջերի քանակը:»,

3) 4-րդ մասում «Սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ» բառերը փոխարինել «Անշարժ» բառով, իսկ «աջ՝ ներքեւի անկյունում» բառերը փոխարինել «վրա» բառով,

4) 5-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) օգտագործել վավերականությունը չհաստատված աղբյուրներից ստացված տվյալներ, ներառել գնահատման չհիմնավորված մեկնաբանություններ եւ եզրակացություններ, ինչպես նաեւ տվյալներ եւ տեղեկություններ, որոնք ստացվել են այլ գնահատման հաշվետվույթուն կազմելու նպատակով Հաշվառման ծրագրի կողմից գեներացված այլ քաղվածքի հիման վրա.»:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի.

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Գնահատման հաշվետվության վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ գնահատման ստանդարտներին համապատասխանության խնդիրները կարող է պարզաբանել լիազոր մարմինը՝ նրան ուղղված գնահատման գործունեության սուբյեկտներից յուրաքանչյուրի կամ շահառուների դիմումի հիման վրա, կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ, բացառությամբ եթե լիազոր մարմնում առկա է տեղեկատվություն առ այն, որ գնահատման հաշվետվությունը դատարանում քննության առարկա է կամ դատական քննության ընթացքում ներկայացվել է որպես ապացույց, որոնց վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով:»,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 16-րդ հոդվածում.

1) 1-ին մասը լրացնել նոր 1.1-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) գնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից՝ Հաշվառման ծրագրի կողմից գեներացված համապատասխան քաղվածքի հիման վրա, հետեւյալ եղանակներով՝

ա. էլեկտրոնային եղանակով՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների շտեմարաններին հասանելիության ապահովման միջոցով՝ համապատասխան մարմնի հետ կնքված պայմանագրի հիման վրա.

բ. թղթային եղանակով՝ գրավոր հարցման հիման վրա.»,

2) լրացնել նոր 1.1-ին մաս հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված տեղեկություններ ստանալու իրավունքը ծագում է սույն օրենքի ուժով Հաշվառման ծրագրի կողմից համապատասխան քաղվածքի գեներացման պահից: Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների շտեմարաններին գնահատողների հասանելիության կարգը սահմանում է Կառավարությունը:»,

3) 2-րդ մասը լրացնել նոր 2.1-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«2.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ կնքված

պայմանագրի հիման վրա Կառավարության սահմանած կարգով ստանալու հասանելիություն համապատասխան մարմնի տվյալների շտեմարաններին.»,

4) 3-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) գնահատումը կատարել սույն օրենքով, գնահատման ստանդարտներով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառապես գնահատվող օբյեկտի տեղազննության հիման վրա: Տեղազննության արդյունքների արձանագրման ճշգրտության եւ հիմնավորվածության համար պատասխանատվությունը կրում է գնահատողը: Եթե տեղազննություն իրականացնելիս որեւէ կերպ խոչընդոտվել է անշարժ գույք մուտք գործելը կամ գնահատման հաշվետվությունը պատվիրվել է պետական մարմինների կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գաղտնի կամ հրապարակման ոչ ենթական վարույթի, ուսումնասիրության կամ գործի շրջանակում, գնահատումն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով.
»,

5) 3-րդ մասում լրացնել նոր 1.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) յուրաքանչյուր գնահատման հաշվետվություն կազմելիս օգտագործել բացառապես տվյալ հաշվետվության համար կատարված հարցման արդյունքում ձեռք բերված տվյալներ եւ տեղեկություններ.»,

6) 3-րդ մասի 2-րդ կետում «հաշվետվության» բառը փոխարինել «հաշվետվությունները, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված՝ Հաշվառման ծրագրում մուտքագրման ենթակա գնահատման հաշվետվությունների» բառերով,

7) 3-րդ մասի 3-րդ եւ 4-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) գնահատման հաշվետվության յուրաքանչյուր էջին լրացնել Հաշվառման ծրագրի կողմից ձեւավորված անհատական ծածկագիրը.

4) էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրել հաշվետվությունը.»,

8) 3-րդ մասում լրացնել նոր 5.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ.

«5.1) հրաժարվել գնահատման իրականացումից շահերի բախման իրավիճակում, այդ թվում՝ եթե նույն գույքի վերաբերյալ նախկինում իրականացրել է գնահատում՝ հանդիսանալով այլ գնահատման կազմակերպության աշխատակից.»,

9) 3-րդ մասի 10-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

10) 3-րդ մասը լրացնել նոր 11-12-րդ կետերով հետեւյալ բովանդակությամբ.

«11) լիազոր մարմնի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացում ներկայացնել իր կողմից կազմված գնահատման հաշվետվությունները, գնահատման հաշվետվությունների ցանկը, ինչպես նաեւ վերահսկողություն իրականացնելու համար լիազոր մարմնի պահանջած՝ գնահատման ստանդարտներով սահմանված գնահատման աշխատանքի ընթացքում ձեռք բերված հիմնական, նախնական տվյալները, բոլոր հաշվարկները, հետազոտության եւ վերլուծության արդյունքները, որոնց միջոցով կայացվել է արժեքի վերաբերյալ վերջնական եզրակացությունը: Երեք աշխատանքային օրվա ընթացքում պահանջված տեղեկատվությունը ներկայացնելու անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը պարտավոր է գրավոր դիմել լիազոր մարմին՝ հայտնելով կատարման անհնարինության մասին, նշելով անհնարինության պատճառները եւ հայցելով կատարման նոր ժամկետ.

12) սույն մասի 11-րդ կետով լիազոր մարմնի պահանջով ներկայացման ենթակա հաշվետվություններում, պահանջված տեղեկատվությունում, ինչպես նաեւ այլ փաստաթղթերում չներառել կեղծ կամ խեղաթյուրված տվյալներ:»,

11) 4-րդ մասի 2-րդ կետում «ղեկավարի» բառից հետո լրացնել «էլեկտրոնային թվային» բառը, «եւ կնիքով (առկայության դեպքում),» բառերը փոխարինել «՝» կետադրական նշանով,

12) 4-րդ մասի 6-րդ եւ 7-րդ կետերում «հետ աշխատանքային» բառից հետո լրացնել «կամ ծառայությունների մատուցման» բառերը եւ 6-րդ կետում «կնքված» բառից հետո «աշխատանքային» բառը հանել:

Հոդված 9. Օրենքի 17-րդ հոդվածում.

1) 1-ին մասում լրացնել նոր 4.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ.

«4.1) գնահատողի վկայականի կասեցման դեպքում պահանջելու կատարել պայմանագրով ստանձնած պարտականությունները կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով միակողմանի հրաժարվելու պայմանագրից.»,

2) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) գնահատման կազմակերպությանը կամ գնահատողին տրամադրել գնահատման օբյեկտի վերաբերյալ եւ գնահատման համար անհրաժեշտ իր տիրապետության ներքո գտնվող ամբողջական, հավաստի տեղեկատվություն եւ փաստաթղթեր, այդ թվում՝ գնահատվող օբյեկտի ֆիզիկական եւ տեխնիկական բնութագրեր, գնահատողի պահանջով ներկայացնել պարզաբանումներ, ինչպես նաեւ ապահովել գնահատվող գույքի տեղազննման հնարավորություն.»,

3) լրացնել նոր 3-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գնահատման հաշվետվության կապակացությամբ առաջացած ցանկացած անբարենպաստ հետեւանքի համար պատասխանատվությունը կրում է բացառապես պատվիրատուն, բացառությամբ այն դեպքերի երբ պատվիրատուն ապացուցում է, որ պարտականությունների պատշաճ կատարումն անհնարին է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ եւ անկանխելի հանգամանքների հետեւանքով:»:

Հոդված 10. Օրենքի 20-րդ հոդվածում.

1) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Որակավորման քննությունները դասակարգվում են հետեւյալ տեսակների՝

1) 3-րդ կարգի գնահատողի որակավորման քննություն, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող անձինք.

2) 2-րդ կարգի գնահատողի որակավորման քննություն, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող եւ գնահատման ոլորտում երկու տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք, ինչպես նաեւ 3-րդ կարգի գնահատողի որակավորում ունեցող եւ լիազոր մարմնի կողմից հաստատված վեցամսյա մասնագիտական դասընթացին մասնակցած անձինք.

3) 1-ին կարգի գնահատողի որակավորման քննություն, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն եւ գնահատման ոլորտում հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք, ինչպես նաեւ 2-րդ կարգի գնահատողի որակավորում

ունեցող եւ լիազոր մարմնի կողմից հաստատված վեցամսյա մասնագիտական դասընթացին մասնակցած անձինք:»,

2) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Որակավորման քննություններին դիմելու եւ մասնակցելու պայմանները, որակավորման քննությունների մասնակիցներին ներկայացվող պահանջները եւ որակավորման քննությունների կարգը սահմանում է Կառավարությունը, որով սահմանվում են յուրաքանչյուր տեսակի որակավորման քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման ժամկետները եւ ձեւերը, ինչպես նաեւ որակավորման քննություններին առաջադրվող հարցերի, խնդիրների եւ առաջադրանքների քանակը, քննությունների արդյունքների գնահատման կարգը, քննության անցկացման համար նախատեսված ժամանակը, տեխնիկական միջոցներից օգտվելու կարգը, որակավորման վկայական ստանալու համար անհրաժեշտ միավորների քանակը, քննության արդյունքների բողոքարկման կարգը, ինչպես նաեւ քննությունը պատշաճ անցկացնելուն ուղղված այլ դրույթներ:»,

3) 5-րդ մասից հանել «, առաջադրվող հարցերը» բառերը, «որակավորման հանձնաժողովը, եւ» բառերը փոխարինել «լիազոր մարմինը, որը» բառերով, իսկ «հարցաշարերը» բառից հետո «, առաջադրվող հարցերը» բառերը հանել,

4) 6-րդ մասում «համակարգչային թեստավորման» բառերը փոխարինել «համակարգչի» բառով,

5) 9-րդ մասում «հայտատուին» բառից հետո լրացնել «համապատասխանաբար 3-րդ կարգի, 2-րդ կարգի կամ 1-ին կարգի» բառերը:

Հոդված 11. Օրենքում լրացնել նոր 20.1-ին հոդված հետեւյալ բովանդակությամբ.

«**Հոդված 20.1. Որակավորման վկայականների դասակարգումը**

1. Որակավորման վկայականներն ըստ տեսակների դասակարգվում են՝ 3-րդ կարգի, 2-րդ կարգի եւ 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայականների:

2. 3-րդ կարգի գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (3-րդ կարգի գնահատող) իրավասու է իրականացնել միայն բնակարանների եւ մարդատար ավտոմեքենաների գնահատում, բացառությամբ սույն օրենքի 9-րդ

հոդվածով սահմանված դեպքերի եւ նոր ստեղծվող (կառուցման ընթացքում գտնվող) անշարժ գույքի:

3. 2-րդ կարգի գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (2-րդ կարգի գնահատող) իրավասու է իրականացնել բոլոր տեսակի գնահատման օբյեկտների գնահատում, բացառությամբ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված դեպքերի եւ նոր ստեղծվող (կառուցման ընթացքում գտնվող) անշարժ գույքի:

4. 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (1-ին կարգի գնահատող) իրավասու է իրականացնել ցանկացած տեսակի գնահատման օբյեկտի գնահատում:»:

Հոդված 12. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«**Հոդված 22. Գնահատման գործունեություն իրականացելու համար տրամադրվող միավորները եւ դրանց նվազեցման կարգը, վկայականի գործողության կասեցման եւ դադարեցման հիմքերը**

1. Գնահատողի որակավորման վկայական ստացած անձին որակավորման վկայական տրամադրելու օրվանից մեկ տարի ժամկետով գնահատման գործունեություն իրականացելու համար տրվում է 20 միավոր: Գնահատողին յուրաքանչյուր հաջորդ տարի տրվում է 20 միավոր, ընդ որում՝ նախորդ տարվա միավորների մնացորդը չի փոխանցվում հաջորդ տարի:

2. Սույն հոդվածով սահմանված խախտումների համար համապատասխանաբար կիրառվում են 1, 3 կամ 20 միավոր նվազեցումները: Նվազեցումները կատարվում են լիազոր մարմնի կողմից՝ մասնագիտական հանձնաժողովի միջոցով՝ գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրությունների շրջանակներում կազմված եզրակացությունների հիման վրա:

3. 1 միավոր նվազեցումը կիրառվում է, եթե գնահատողն իր կազմած գնահատման հաշվետվությունում թույլ է տվել տեխնիկական կամ ձեւաբանական սխալ կամ վրիպակ, որը չի հանգեցնում կազմած գնահատման հաշվետվության անարժանահավատության եւ չի ազդում գնահատված արժեքի վրա: Ընդ որում, յուրաքանչյուր գնահատման հաշվետվության ուսումնասիրության ընթացքում սույն մասով սահմանված յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1-ական միավոր, իսկ

նույն գնահատման հաշվետվության մեջ ամբողջությամբ նույն տեխնիկական կամ ձեւաբանական սխալը կամ վրիպակը մեկից ավելի անգամ կրկնվելու դեպքում, անկախ դրանց ընդհանուր քանակից, հանվում է 1 միավոր:

4. 3 միավոր նվազեցումը կիրառվում է, եթե գնահատողն իր կազմած գնահատման հաշվետվությունում թույլ է տվել մեթոդաբանական կամ վերլուծական այնպիսի խախտում, որը չի ազդել գնահատված արժեքի վրա: Սույն մասով նախատեսված հիմքով յուրաքանչյուր խախտման համար հանվում է 3-ական միավոր, ընդ որում, յուրաքանչյուր գնահատման հաշվետվության ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր սխալի համար հանվում է 3-ական միավոր: 3 միավորի նվազեցումը կիրառվում է նաեւ այն դեպքում, երբ գնահատողը չի կատարել սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով սահմանված պարտականությունը:

5. 20 միավոր նվազեցումը կատարվում է, եթե գնահատողը իր կազմած գնահատման հաշվետվությունում թույլ է տվել գնահատման արժեքի վրա ազդող սխալ կամ գնահատումն իրականացրել է շահերի բախման իրավիճակում:

6. Վկայականի գործողության կասեցման հիմքերն են՝

1) մեկ օրացուցային տարվա ընթացքում 7 միավոր նվազեցումը.

2) վկայականի գործողությունը կասեցնելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը.

3) պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ լինելու ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաեւ հանրային պաշտոնում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում՝ իր լիազորությունների ժամկետով.

4) գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամավճարը երկու ամիս անընդմեջ չվճարելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը համարվում է կասեցված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից լիազոր մարմին ներկայացված կասեցման դիմումի եւ անդամավճարը վճարված չլինելու մասին տեղեկանքի հիման վրա մինչեւ վճարումներն ամբողջությամբ կատարելը.

5) գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը մեկ ամիս անընդմեջ չանդամակցելը մինչեւ անդամակցելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը կասեցվում է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության

կողմից լիազոր մարմին ներկայացված կասեցման դիմումի եւ անդամակցությունը դադարեցված լինելը հավաստող տեղեկանքի հիման վրա,

6) սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի «գ» եւ «դ» ենթակետերով ահմանված կարգով նախատեսված տեղեկատվությունը լիազոր մարմնին ոչ ամբողջական ներկայացնելը կամ չներկայացնելը,

7. Վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցնում է լիազոր մարմինը՝ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցվում է նվազագույնը՝ մեկ ամիս ժամկետով, իսկ առավելագույնը՝ երկու տարի ժամկետով՝ սույն հոդվածի 20-րդ մասով սահմանված կարգով:

8. Սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված հիմքով վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցվում է անորոշ ժամկետով՝ մինչեւ հիմքերի պատշաճ վերացումը:

9. Վկայականի գործողությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանը (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը) այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկվում է համապատասխան որակավորված անձին՝ Կառավարության սահմանած կարգով Հաշվառման ծրագրի միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանն ուժի մեջ է մտնում Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ Հաշվառման ծրագրից տեղեկություններ ստանալու համար եւ լիազոր մարմնին անհապաղ գրավոր տեղեկացնել Հաշվառման ծրագրից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը համապատասխան հրամանը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է որակավորված անձին: Վկայականի գործողության կասեցման մասին լիազոր

մարմնի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը լիազոր մարմնի պաշտոնական կայքում կատարվում է վկայականի գործողության կասեցման մասին նշում:

10. Վկայականի գործողության կասեցման ընթացքում գնահատողն իրավունք չունի իրականացնելու գնահատման գործունեություն, բացառությամբ նախքան վկայականի կասեցումը կնքված եւ գործող պայմանագրերի հիման վրա սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով սահմանված դեպքերում պատվիրատուի կողմից պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելու պահանջի հիմքով կատարված գնահատման գործունեության:

11. Վկայականի գործողության դադարեցման հիմքերն են՝

1) մեկ օրացուցային տարվա ընթացքում կամ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված խախտման հիմքով 20 միավոր նվազեցումը.

2) վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերում հետագայում հայտնաբերված կեղծ կամ խեղաթյուրված տվյալների առկայությունը.

3) որակավորված անձին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու կամ գնահատման գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը.

4) գնահատողի մահվան կամ նրան մահացած ճանաչելու մասին դատական ակտն ուժի մեջ մտնելը.

5) վկայականի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որակավորված անձի դիմումը.

6) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումը խախտելը.

7) վկայականի գործողության կասեցման ժամկետում սույն օրենքի իմաստով գնահատման գործունեություն իրականացնելը.

8) որակավորման վկայականի սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը լրանալը:

12. Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերի, ինչպես նաեւ Կառավարության սահմանած դեպքերում եւ կարգով լիազոր մարմինը ստեղծում է լիազոր մարմնի եւ գնահատման ինքնակարգավորվող կազմակերպությունների

մասնակցությամբ հանձնաժողով, որի կազմը պետք է տարբերվի գործող մասնագիտական հանձնաժողովի կազմից եւ որի գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հանձնաժողովը ուսումնասիրելով գնահատման հաշվետվությունը եւ մասնագիտական հանձնաժողովի եզրակացությունը, քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ որոշում է արդյոք առկա են 20 միավոր նվազեցնելու հիմքեր: Քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի կազմում ներառված լիազոր մարմնի ներկայացուցիչներն ունեն որոշիչ ձայնի իրավունք: Հանձնաժողովի նիստերն ուղիղ եթերով առցանց հեռարձակվում են լիազոր մարմնի պաշտոնական կայքում կամ սոցիալական ցանցի էջում: Հանձնաժողովի ցանկացած անդամ իրավունք ունի հայտնելու հատուկ կարծիք: Հանձնաժողովի եզրակացության հիման վրա կազմվում է ամփոփաթերթ, որը կցվում է վարչական վարույթի նյութերին: Որակավորման վկայականի գործողությունը դադարեցվում է վկայականն ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

13. Վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի՝ վկայականն ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանով դադարեցնում է լիազոր մարմինը՝ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

14. Վկայականն ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանը (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը) այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկվում է համապատասխան որակավորված անձին՝ Հաշվառման ծրագրի միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանն ուժի մեջ է մտնում Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ Հաշվառման ծրագրից տեղեկություններ ստանալու համար եւ լիազոր մարմնին անհապաղ գրավոր տեղեկացնել Հաշվառման ծրագրից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում մեկ

աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը համապատասխան հրամանը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է որակավորված անձին: Վկայականն ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը լիազոր մարմնի պաշտոնական կայքում կատարվում է վկայականի գործողության դադարեցման մասին նշում:

15. Ցանկացած կարգի գնահատողի որակավորման վկայականի գործողության դադարեցումից հետո անձը Կառավարության սահմանած կարգով կարող է դիմել 3-րդ կարգի գնահատողի որակավորման քննությանը մասնակցելու համար՝ վերջինիս վկայականի գործողության դադարեցումից երեք ամիս հետո, իսկ 1-ին եւ 2-րդ կարգի գնահատողի որակավորման վկայականի գործողության դադարեցումից հետո համապատասխանաբար նույն կարգի գնահատողի որակավորման քննություններին մասնակցելու համար՝ վկայականի գործողության դադարեցումից մեկ տարի հետո:

16. Վկայականն ուժը կորցրած ճանաչելու կամ գործողությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի հրամանները ենթակա են անհապաղ կատարման եւ դրանց դատական կարգով բողոքարկումը չի կասեցնում վիճարկվող հրամանի կատարումը:

17. Վկայականը կասեցնելու եւ դադարեցնելու մասին լիազոր մարմնի հրամանի պատճենը Հաշվառման ծրագրի միջոցով ուղարկվում է նաեւ գնահատման կազմակերպությանը:

18. Սույն հոդվածով սահմանված հիմքերով 6 միավոր եւ ավել նվազեցնելու դեպքում գնահատողը պարտավոր է անցնել մասնագիտական վերապատրաստում: Յուրաքանչյուր նվազեցված միավորի դիմաց գնահատողը պարտավոր է անցնել մեկական ժամ մասնագիտական վերապատրաստում:

19. Մասնագիտական վերապատրաստումն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների, հաշվառված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների, անհատական դասընթացների, ինչպես նաեւ միջազգային դասընթացներին մասնակցությամբ, որոնց արդյունքները, դասընթացների ժամաքանակը եւ ժամկետները պետք է ամրագրված լինեն դասընթացը կազմակերպողի հավաստագրով: Մասնագիտական վերապատրաստման նվազագույն պահանջները սահմանում է լիազոր մարմինը:

20. Համապատասխան ժամաքանակով մասնագիտական վերապատրաստումը հավաստող հավաստագրի ներկայացման դեպքում լիազոր մարմնի որոշմամբ գնահատողի որակավորման վկայականի կասեցումը վերացվում է: Ընդ որում, մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հավաստող հավաստագրի տրամադրման ժամկետը կարող է նաեւ նախորդել վկայականը կասեցնելու կամ միավորները նվազեցնելու ամսաթվին, բայց ոչ ավել քան այդ ամսաթվին նախորդող մեկ տարի ժամկետը: Գնահատողի կողմից մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հավաստող հավաստագիրը լիազոր մարմին կարող է ներկայացվել վկայականի կասեցման հրամանն ուժի մեջ մտնելուց մեկ ամիս հետո՝ մինչեւ երկու տարին լրանալը: Վկայականը կասեցնելու մասին լիազոր մարմնի հրամանն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում սույն հոդվածով սահմանված կարգով մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հավաստող հավաստագիրը լիազոր մարմինին չներկայացնելու դեպքում վկայականի գործողությունը դադարեցվում օրենքի ուժով:»:

Հոդված 13. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի.

1) 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտով, վաղաժամկետ դադարեցնում է մասնագիտական հանձնաժողովի գնահատող անդամի անդամակցությունը: Մասնագիտական հանձնաժողովի գնահատող անդամի անդամակցությունը վաղաժամկետ դադարում է գնահատողի որակավորման վկայականի գործողությունը դադարեցնելով կամ կասեցնելով, գնահատողին հաշվառումից հանելով, մասնագիտական հանձնաժողովի նիստերին երկու եւ ավելի անգամ անհարգելի բացակայելու դեպքերում.»

2) 7-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ա. գնահատման սուբյեկտների կամ շահառուների դիմումների հիման վրա կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ կատարում է գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրություններ՝ մասնագիտական հանձնաժողովի միջոցով, այդ թվում՝ գնահատված օբյեկտի արժեքի արժանահավատության, ինչպես

նաեւ գնահատման հաշվետվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ գնահատման ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ, որոնք եզրափակվում են մասնագիտական հանձնաժողովի կողմից տրված սույն օրենքով սահմանված եզրակացությունների հիման վրա՝ լիազոր մարմնի՝ վարչական վարույթը, համապատասխան դեպքով եւ հիմքերով, եզրափակելու մասին վարչական ակտ կայացնելով: Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը եւ կարգը սահմանում է Կառավարությունը: Մասնագիտական հանձնաժողովի մասնագիտական ուսումնասիրությունների առարկա չեն կարող լինել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված օտարվող սեփականության եւ դրա նկատմամբ գույքային իրավունքների գնահատման հաշվետվությունները: Մասնագիտական հանձնաժողովի կողմից ուսումնասիրության ենթակա չեն այն գնահատման հաշվետվությունները, որոնց կապակցությամբ լիազոր մարմնում առկա է տեղեկատվություն առ այն, որ դրանք դատարաններում քննության առարկա են կամ դատական քննության ընթացքում ներկայացվել են որպես ապացույց: Լիազոր մարմնի նախաձեռնությամբ մասնագիտական ուսումնասիրություններ իրականացնելու դեպքերը սահմանվում են գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգով.»,

3) 7-րդ կետը լրացնել նոր «գ-դ» ենթակետերով հետեւյալ բովանդակությամբ.

«գ. գնահատողներից կամ գնահատման կազմակերպություններից պահանջում է ներկայացնել գնահատման հաշվետվությունները, ինչպես նաեւ վերահսկողություն իրականացնելու համար լիազոր մարմնի պահանջած՝ գնահատման ստանդարտներով սահմանված գնահատման աշխատանքի ընթացքում ձեռք բերված հիմնական, նախնական տվյալները, բոլոր հաշվարկները, հետազոտության եւ վերլուծության արդյունքները, որոնց միջոցով կայացվել է արժեքի վերաբերյալ վերջնական եզրակացությունը: Պահանջված տեղեկատվությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու անհնարինության եւ նոր ժամկետ հայցելու վերաբերյալ գրավոր դիմումի հիման վրա լիազոր մարմինը, կատարման

անհնարինությունը հաստատվելու դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է փաստաթղթերի ներկայացման նոր ժամկետ տրամադրելու մասին.

դ. գնահատման հաշվետվությունները, ինչպես նաեւ սույն կետի «գ» ենթակետում նշված տեղեկատվությունները ոչ ամբողջական ներկայացնելու դեպքում, գնահատողներին կամ գնահատման կազմակերպություններին տրամադրվում է երեք աշխատանքային օր՝ ճշգրտված տեղեկատվությունը կրկին ներկայացնելու համար.»:

Հոդված 14.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից մեկ տարի հետո:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրամադրված՝ գնահատման գործունեության որակավորման վկայականները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համարվելու են 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայականներ: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Կադաստրի կոմիտեն մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրամադրված գնահատման գործունեության որակավորման վկայականները վերաձեւակերպում է 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայականների՝ տրամադրելով համապատասխան գնահատողներին:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պետք է ընդունվեն ոչ ուշ քան սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, Կադաստրի կոմիտեն համապատասխան ենթաօրենսդրական ակտերը համապատասխանեցնում է սույն օրենքին:

Կ-1224-22.12.2025-ՏՀ-011/1

Լրամշակված ~~նախագիծ~~
Երկրորդ ընթերցում

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնահատման գործունեության մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում լրացնել նոր 2-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«2. Գնահատման գործունեության ոլորտում Կառավարությունն իրավասու է հաստատել եւ իրականացնել գնահատման գործունեության ոլորտի ծրագրեր եւ հայեցակարգեր:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) **լիազոր մարմին՝** սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործունեության ոլորտը կարգավորող եւ վերահսկող, ֆիզիկական անձանց գնահատման մասնագիտական որակավորում (այսուհետ՝ Որակավորում) իրականացնող, որակավորման վկայականի գործողությունը կասեցնող եւ դադարեցնող, գնահատման գործունեություն իրականացնելու նպատակով գնահատողներին, գնահատման կազմակերպություններին (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող), ~~գնահատման կազմակերպություններին,~~ ինչպես նաեւ գնահատողների

ինքնակարգավորվող կազմակերպություններին հաշվառող եւ հաշվառումից հանող լիազոր մարմին.»,

~~2) 6-րդ կետում «որոշմանը» բառը փոխարինել «վերաբերյալ մասնագիտական կարծիքի ձեւավորմանը» բառերով,~~

~~3) 7-րդ կետում «տեղեկություն» բառը փոխարինել «տվյալների վերլուծության վրա հիմնված մասնագիտական կարծիք» բառերով,~~

~~4~~3) 8-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«8) **գնահատման առաջադրանք՝** պատվիրատուի կողմից գնահատողին ներկայացվող առաջադրանք, որում արտացոլվում են գնահատվող օբյեկտի նույնականացման տվյալները, գնահատման նպատակով ներկայացված փաստաթղթերի ցանկը, ինչպես նաեւ գնահատման արժեքի տեսակը, գնահատման նպատակը, եւ գնահատվող օբյեկտի նկատմամբ իրավունքների տեսակը.»,

~~5~~4) 11-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«11) **գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագիր՝** լիազոր մարմնի ներդրած առցանց աշխատող էլեկտրոնային տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ Հաշվառման ծրագիր), որտեղ մուտքագրվում են անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ սույն օրենքով սահմանված տվյալները, իսկ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված՝ անշարժ գույքի գնահատման պարտադիր դեպքերում՝ նաեւ անշարժ գույքի գնահատման հաշվետվությունները.»,

~~6~~5) 17-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

~~7~~6) լրացնել նոր 18-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«18) **հաշվառում՝** լիազոր մարմնի կողմից որակավորված անձանց, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերին, ինչպես նաեւ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններին սույն օրենքով սահմանված դիմումի եւ փաստաթղթերի հիմքով Հաշվառման ծրագրում ներառելը եւ սույն օրենքով սահմանված պահանջների ապահովման դեպքում Հաշվառման ծրագիրը կիրառելու նպատակով հասանելություն տրամադրելը:»:

Հոդված ~~2~~3. Օրենքի 8-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «գաղտնաբառը» բառից հետո լրացնել «գնահատման» բառը,

2) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հաշվառման ծրագիր մուտք են գործում «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով:»,

3) լրացնել նոր 1.1-ին ~~մասով~~մաս հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Գնահատողի կողմից սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պայմանագիրը՝ անշարժ գույքի դեպքում, կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ~~հաշվառման~~Հաշվառման ծրագիր պարտադիր ենթակա են մուտքագրման այդ պայմանագրի անբաժանելի ~~մաս~~հավելված հանդիսացող գնահատման առաջադրանքը, գնահատման նպատակը եւ գնահատման ենթակա օբյեկտի հասցեն, որի վերաբերյալ համակարգը գեներացնում է համապատասխան նույնականացնող տվյալներ պարունակող քաղվածք: Սույն մասով սահմանված պայմանագրի հիման վրա գնահատման հաշվետվություն կազմելուց հետո գնահատողի կողմից Հաշվառման ծրագիր պարտադիր ենթակա են մուտքագրման անշարժ գույքի վերաբերյալ իր կազմած յուրաքանչյուր գնահատման հաշվետվության վերաբերյալ հետեւյալ տվյալները՝

1) գնահատված օբյեկտի հասցեն.

2) գնահատման նպատակը, պայմանագրի անբաժանելի ~~հավելվածը,~~հավելված հանդիսացող գնահատման առաջադրանքը.

3) գնահատման ամսաթիվը.

4) գնահատված արժեքը.

5) գնահատված օբյեկտի վերաբերյալ առկա այն սահմանափակումները, որոնք ազդել են արժեքի որոշման վրա.

6) գնահատված օբյեկտի տեղազննության արձանագրությունը:»,

4) 2-րդ ~~մասում «~~մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Յուրաքանչյուր~~» բառից հետո լրացնել «~~ գնահատման ~~առաջադրանք~~հաշվետվություն կամ~~» բառերը,~~

~~5) 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ.~~

~~«~~ հաշվետվության վերաբերյալ տվյալներ Հաշվառման ծրագիր մուտքագրելիս ինքնաշխատ ձեւավորվում է հաշվետվությունը նույնականացնող անհատական

ծածկագիր: Հաշվառման ծրագրում հաշվետվության տվյալների մուտքագրումը փաստում է հաշվետվության գոյության մասին: Հաշվետվության վերաբերյալ տվյալները Հաշվառման ծրագիր մուտքագրված չլինելու դեպքում տվյալ հաշվետվությունը չի կարող օգտագործվել որպես գնահատման հաշվետվություն:»,

5) 3-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Սույն հոդվածի 1.1-ին եւ 2-րդ մասերով սահմանված պահանջները չեն տարածվում պետական մարմինների կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գաղտնի կամ հրապարակման ոչ ենթական վարույթի, ուսումնասիրության կամ գործի շրջանակում պատվիրված եւ կազմված գնահատման հաշվետվությունների վրա: Սույն մասով սահմանված տվյալները Հաշվառման ծրագիր մուտքագրելու դեպքում պատասխանատվությունը կրում է գնահատողը:»,

6) լրացնել նոր 5-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«5. Սույն օրենքով սահմանված կարգով վկայականի կասեցման դեպքում գնահատողին կարող է տրամադրվել Հաշվառման ծրագրի կիրառման սահմանափակ հասանելիություն՝ բացառապես այն դեպքում, երբ Հաշվառման ծրագրում առկա է գնահատողի կողմից մուտքագրված ընթացիկ գնահատման առաջադրանք, որի կապակցությամբ պատվիրատուն սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետով սահմանված կարգով պահանջել է շարունակել պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:»:

Հոդված ~~3~~4. Օրենքի 11-րդ հոդվածի.

1) 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«Գնահատման առաջադրանքը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի հավելվածը:»,

2) 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) գնահատման դիմաց վճարի չափի, ինչպես նաեւ գնահատման հաշվետվության կազմման համար անհրաժեշտ տեղեկությունների, փաստաթղթերի ձեռքբերման պետական տուրքի եւ այլ վճարների չափի վերաբերյալ, որը չի ներառվում գնահատման դիմաց վճարի գումարի մեջ~~,~~ եւ ըստ անհրաժեշտ տեղեկությունների եւ

փաստաթղթերի ձեռքբերման դիմաց վճարման ենթակա պետական տուրքի եւ այլ վճարների չափի փոփոխության, կարող է փոփոխվել եւ ենթակա է վճարման պատվիրատուի կողմից.»,

3)- 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) պատվիրատուին ուղղված ծանուցում՝ սույն օրենքի համաձայն պայմանագրի կնքման հիմքով պատվիրատուի անունից գնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու մասով գնահատողին լիազորություն ընձեռելու վերաբերյալ.»,

4) 2-րդ մասում լրացնել նոր 5-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

-«5)- գնահատվող օբյեկտի վերաբերյալ պատվիրատուի կողմից Պայմանագրի կնքման պահին տրամադրված տեղեկությունների եւ փաստաթղթերի ամբողջական ցանկի վերաբերյալ:»:

Հոդված 45. Օրենքի 12-րդ հոդվածում.

1) 2-րդ ~~մասում~~մասի առաջին նախադասությունում «աշխատանքային» բառից հետո լրացնել «կամ ծառայությունների մատուցման» բառերը, իսկ «պայմանագրի վերաբերյալ տեղեկանքի» բառերից առաջ՝ «եւ ծառայությունների մատուցման» բառերը,

2) 8-րդ մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

3) 8-րդ մասը լրացնել նոր 5-6-րդ կետերով հետեւյալ բովանդակությամբ.

«5) որակավորման վկայականի գործողության կասեցման դեպքում.

6) սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով նախատեսված պահանջը խախտելու դեպքում:»,

4) լրացնել նոր 8.2-8.4-րդ ~~մասերով~~մասեր հետեւյալ բովանդակությամբ.

«8.2. Սույն հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում անձն իրավունք ունի նոր դիմում ներկայացնելու որպես գնահատող հաշվառում ստանալու համար միայն հաշվառումից հանվելուց վեց ամիս հետո, եթե հաշվառումից դուրս գալու դիմում ներկայացնելու պահին հանդիսացել է մասնագիտական կամ որակավորման հանձնաժողովի անդամ:

8.3. Սույն հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում անձն իրավունք ունի նոր դիմում ներկայացնելու որպես գնահատող հաշվառում ստանալու համար միայն սույն օրենքով նախատեսված հիմքերի վերացման դեպքերում:

8.4. Սույն հոդվածի 8-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով հաշվառումից հանվելու դեպքում գնահատողն իրավունք ունի հաշվառում ստանալու նոր դիմում ներկայացնելու միայն հիմքերի վերացումից հետո:»,

5) 11-րդ մասի 3-րդ կետում «1-ին մասի 5-7-րդ» բառերը փոխարինել «11-րդ մասի 1-ին եւ 6-րդ» բառերով,

6) 13-րդ մասից հանել «եւ 3-րդ» բառերը, «կետերով» բառը փոխարինել «կետով» բառով, իսկ «հիմքերով» բառը՝ «հիմքով~~»,~~» բառով,

7) լրացնել նոր 14-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«14. Սույն հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքերով հաշվառումից հանվելու դեպքում գնահատման կազմակերպությունն այլեւս չի կարող հաշվառվել լիազոր մարմնում:»:

Հոդված ~~5~~6. Օրենքի 13-րդ հոդվածի.

1) 1-ին մասում «գրավոր» բառը փոխարինել «բացառապես էլեկտրոնային» բառերով,

2) 2-րդ եւ 3-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Գնահատման հաշվետվությունը ստորագրում է գնահատողը՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. Գնահատման հաշվետվությունը հաստատվում է գնահատողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ (անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում), իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ այն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հետ գնահատողը կնքել է աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագիր, ինչպես նաեւ նշվում է էջերի քանակը:»,

3) 4-րդ մասում «Սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ» բառերը փոխարինել «Անշարժ» բառով, իսկ «աջ՝ ներքեւի անկյունում» բառերը փոխարինել «վրա» բառով,

4) 5-րդ մասի 1-ին ~~կետում «ներառել» բառից առաջ լրացնել «~~կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) օգտագործել վավերականությունը չհաստատված աղբյուրներից ստացված տվյալներ~~,» բառերը~~:, ներառել գնահատման չհիմնավորված մեկնաբանություններ եւ եզրակացություններ, ինչպես նաեւ տվյալներ եւ տեղեկություններ, որոնք ստացվել են այլ գնահատման հաշվետվություն կազմելու նպատակով Հաշվառման ծրագրի կողմից գեներացված այլ բաղվածքի հիման վրա.»:

Հոդված 7. ~~***Հոդված 6.***~~ Օրենքի 14-րդ հոդվածի.

2) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Գնահատման հաշվետվության վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ գնահատման ստանդարտներին համապատասխանության խնդիրները կարող է պարզաբանել լիազոր մարմինը՝ նրան ուղղված գնահատման գործունեության սուբյեկտներից յուրաքանչյուրի կամ շահառուների դիմումի հիման վրա, կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ, բացառությամբ եթե լիազոր մարմնում առկա է տեղեկատվություն առ այն, որ գնահատման հաշվետվությունը դատարանում քննության առարկա է կամ դատական քննության ընթացքում ներկայացվել է որպես ապացույց, որոնց վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով:»,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

~~***Հոդված 7.***~~ ***Հոդված 8.*** Օրենքի 16-րդ հոդվածում.

1) 1-ին մասը լրացնել նոր 1.1-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) գնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից՝ ~~պատվիրատուի լիազորությամբ~~Հաշվառման ծրագրի կողմից գեներացված համապատասխան բաղվածքի հիման վրա, հետեւյալ եղանակներով՝

ա. էլեկտրոնային եղանակով՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների շտեմարաններին հասանելիության ապահովման միջոցով՝ համապատասխան մարմնի հետ կնքված պայմանագրի հիման վրա.

բ. թղթային եղանակով՝ գրավոր հարցման հիման վրա.»,

2) լրացնել նոր 1.1-ին մաս հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին ~~կետի իմաստով գնահատողը համարվում է անհրաժեշտ~~կետով սահմանված տեղեկություններ ստանալու ~~համար լիազորված պատվիրատուի~~իրավունքը ծագում է սույն օրենքի ուժով Հաշվառման ծրագրի կողմից ~~գնահատման պատվերի վերաբերյալ պայմանագիրը կնքելու~~համապատասխան քաղվածքի գեներացման պահից~~: Ընդ որում, սույն մասով նշված լիազորությունն ուղղակիորեն պետք է ամրագրված լինի գնահատման պատվերի վերաբերյալ պայմանագրում~~: Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների շտեմարաններին գնահատողների հասանելիության կարգը սահմանում է Կառավարությունը:»,

3) 2-րդ մասը լրացնել նոր 2.1-ին կետով հետեւյալ բովանդակությամբ.

«2.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ ~~օրենքով սահմանված կարգով~~ կնքված պայմանագրի հիման վրա Կառավարության սահմանած կարգով ստանալու հասանելիություն համապատասխան մարմնի տվյալների շտեմարաններին.»,

4) 3-րդ մասի 1-ին ~~կետում «~~կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) գնահատումը կատարել սույն օրենքով, գնահատման ստանդարտներով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով~~.» բառը փոխարինել «~~, բացառապես գնահատվող օբյեկտի տեղազննության հիման վրա: Տեղազննության արդյունքների արձանագրման ճշգրտության եւ հիմնավորվածության համար պատասխանատվությունը կրում է գնահատողը~~:~~: Եթե տեղազննություն իրականացնելիս որեւէ կերպ խոչընդոտվել է անշարժ գույք մուտք գործելը կամ գնահատման հաշվետվությունը պատվիրվել է պետական մարմինների կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գաղտնի կամ հրապարակման ոչ ենթական վարույթի, ուսումնասիրության կամ գործի

շրջանակում, գնահատումն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով.» բառերով, .»,

5) 3-րդ մասում լրացնել նոր 1.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) յուրաքանչյուր գնահատման հաշվետվություն կազմելիս օգտագործել բացառապես տվյալ հաշվետվության համար կատարված հարցման արդյունքում ձեռք բերված տվյալներ եւ տեղեկություններ.»,

6) 3-րդ մասի 2-րդ կետում «հաշվետվության» բառը փոխարինել «հաշվետվությունները, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված՝ Հաշվառման ծրագրում մուտքագրման ենթակա գնահատման հաշվետվությունների» բառերով,

6 7) 3-րդ մասի 3-րդ եւ 4-րդ կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3) գնահատման հաշվետվության յուրաքանչյուր էջին լրացնել Հաշվառման ծրագրի կողմից ձեւավորված անհատական համարը ծածկագիրը.

4) էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրել հաշվետվությունը.» .»,

7 8) 3-րդ մասում լրացնել նոր 5.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ.

«5.1) հրաժարվել գնահատման իրականացումից շահերի բախման իրավիճակում, այդ թվում՝ եթե նույն գույքի վերաբերյալ նախկինում իրականացրել է գնահատում՝ հանդիսանալով այլ գնահատման կազմակերպության աշխատակից.»,

8 9) 3-րդ մասի 10-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

9 10) 3-րդ մասը լրացնել նոր 11-12-րդ կետերով հետեւյալ բովանդակությամբ.

«11) լիազոր մարմնի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացում ներկայացնել իր կողմից կազմված գնահատման հաշվետվությունները, գնահատման հաշվետվությունների ցանկը, ինչպես նաեւ վերահսկողություն իրականացնելու համար լիազոր մարմնի պահանջած՝ գնահատման ստանդարտներով սահմանված գնահատման աշխատանքի ընթացքում ձեռք բերված հիմնական, նախնական տվյալները, բոլոր հաշվարկները, հետազոտության եւ վերլուծության արդյունքները, որոնց միջոցով կայացվել է արժեքի վերաբերյալ վերջնական եզրակացությունը: Երեք աշխատանքային օրվա ընթացքում պահանջված տեղեկատվությունը ներկայացնելու անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը պարտավոր է գրավոր դիմել

լիազոր մարմին՝ հայտնելով կատարման անհնարինության մասին, նշելով անհնարինության պատճառները եւ հայցելով կատարման նոր ժամկետ.

12) սույն մասի 11-րդ կետով լիազոր մարմնի պահանջով ներկայացման ենթակա հաշվետվություններում, պահանջված տեղեկատվությունում, ինչպես նաեւ այլ փաստաթղթերում չներառել կեղծ կամ խեղաթյուրված տվյալներ:»,

~~10~~11) 4-րդ մասի 2-րդ կետում «ղեկավարի» բառից հետո լրացնել «էլեկտրոնային թվային» բառը, «եւ կնիքով (առկայության դեպքում),» բառերը փոխարինել «՝» կետադրական նշանով,

~~11~~12) 4-րդ մասի 6-րդ եւ 7-րդ կետերում «հետ աշխատանքային» բառից հետո լրացնել «կամ ծառայությունների մատուցման» բառերը եւ 6-րդ կետում «կնքված» բառից հետո «աշխատանքային» բառը հանել:

Հոդված ~~8~~9. Օրենքի 17-րդ հոդվածում.

1) 1-ին մասում լրացնել նոր 4.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ.

«4.1) գնահատողի վկայականի կասեցման դեպքում պահանջելու կատարել պայմանագրով ստանձնած պարտականությունները կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով միակողմանի հրաժարվելու պայմանագրից.»,

2) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) գնահատման կազմակերպությանը կամ գնահատողին տրամադրել գնահատման օբյեկտի վերաբերյալ եւ գնահատման համար անհրաժեշտ իր տիրապետության ներքո գտնվող ամբողջական, հավաստի տեղեկատվություն եւ փաստաթղթեր, այդ թվում՝ գնահատվող օբյեկտի ֆիզիկական եւ տեխնիկական բնութագրեր, գնահատողի պահանջով ներկայացնել պարզաբանումներ, ինչպես նաեւ ապահովել գնահատվող գույքի տեղազննման հնարավորություն.»,

3) լրացնել նոր 3-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գնահատման հաշվետվության կապակցությամբ առաջացած ցանկացած անբարենպաստ հետեւանքի համար պատասխանատվությունը կրում է բացառապես պատվիրատուն, բացառությամբ այն

դեպքերի երբ պատվիրատուն ապացուցում է, որ պարտականությունների պատշաճ կատարումն անհնարին է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ եւ անկանխելի հանգամանքների հետեւանքով:»:

Հոդված ~~9~~10. Օրենքի 20-րդ հոդվածում.

1) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Որակավորման քննությունները դասակարգվում են հետեւյալ տեսակների՝

1) 3-րդ կարգի գնահատողի որակավորման քննություն, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող անձինք.

2) 2-րդ կարգի գնահատողի որակավորման քննություն, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող եւ գնահատման ոլորտում երկու տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք, ինչպես նաեւ 3-րդ կարգի գնահատողի որակավորում ունեցող եւ լիազոր մարմնի կողմից հաստատված վեցամսյա մասնագիտական դասընթացին մասնակցած անձինք.

3) 1-ին կարգի գնահատողի որակավորման քննություն, որին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն եւ գնահատման ոլորտում հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող անձինք, ինչպես նաեւ 2-րդ կարգի գնահատողի որակավորում ունեցող եւ լիազոր մարմնի կողմից հաստատված վեցամսյա մասնագիտական դասընթացին մասնակցած անձինք:»,

2) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Որակավորման քննություններին դիմելու եւ մասնակցելու պայմանները, որակավորման քննությունների մասնակիցներին ներկայացվող պահանջները եւ որակավորման քննությունների կարգը սահմանում է Կառավարությունը, որով սահմանվում են յուրաքանչյուր տեսակի որակավորման քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման ժամկետները եւ ձեւերը, ինչպես նաեւ որակավորման քննություններին առաջադրվող հարցերի, խնդիրների եւ առաջադրանքների քանակը, քննությունների արդյունքների գնահատման կարգը, քննության անցկացման համար նախատեսված ժամանակը, տեխնիկական միջոցներից օգտվելու կարգը, որակավորման վկայական ստանալու

համար անհրաժեշտ միավորների քանակը, քննության արդյունքների բողոքարկման կարգը, ինչպես նաեւ քննությունը պատշաճ անցկացնելուն ուղղված այլ դրույթներ:»,

3) 5-րդ մասից հանել «, առաջադրվող հարցերը» բառերը, «որակավորման հանձնաժողովը, եւ» բառերը փոխարինել «լիազոր մարմինը, որը» բառերով, իսկ «հարցաշարերը» բառից հետո «, առաջադրվող հարցերը» բառերը հանել,

4) 6-րդ մասում «համակարգչային թեստավորման» բառերը փոխարինել «համակարգչի» բառով,

5) 9-րդ մասում «հայտատուին» բառից հետո լրացնել «համապատասխանաբար 3-րդ կարգի, 2-րդ կարգի կամ 1-ին կարգի» բառերը:

Հոդված ~~10~~11. Օրենքում լրացնել նոր 20.1-ին հոդված հետեւյալ բովանդակությամբ.

«**Հոդված 20.1. Որակավորման վկայականների դասակարգումը**

1. Որակավորման վկայականներն ըստ տեսակների դասակարգվում են՝ 3-րդ կարգի, 2-րդ կարգի եւ 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայականների:

2. 3-րդ կարգի գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (3-րդ կարգի գնահատող) իրավասու է իրականացնել միայն բնակարանների եւ մարդատար ավտոմեքենաների գնահատում, բացառությամբ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված դեպքերի եւ նոր ստեղծվող (կառուցման ընթացքում գտնվող) անշարժ գույքի:

3. 2-րդ կարգի գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (2-րդ կարգի գնահատող) իրավասու է իրականացնել բոլոր տեսակի գնահատման օբյեկտների գնահատում, բացառությամբ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված դեպքերի եւ նոր ստեղծվող (կառուցման ընթացքում գտնվող) անշարժ գույքի:

4. 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայական ունեցող գնահատողն (1-ին կարգի գնահատող) իրավասու է իրականացնել ցանկացած տեսակի գնահատման օբյեկտի գնահատում:»:

Հոդված ~~11~~12. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 22. Գնահատման գործունեություն իրականացելու համար տրամադրվող միավորները եւ դրանց նվազեցման կարգը, վկայականի գործողության կասեցման եւ դադարեցման հիմքերը

1. Գնահատողի որակավորման վկայական ստացած անձին որակավորման վկայական տրամադրելու օրվանից մեկ տարի ժամկետով գնահատման գործունեություն իրականացելու համար տրվում է 20 միավոր: Գնահատողին յուրաքանչյուր հաջորդ տարի տրվում է 20 միավոր, ընդ որում՝ նախորդ տարվա միավորների մնացորդը չի փոխանցվում հաջորդ տարի:

2. Սույն հոդվածով սահմանված խախտումների համար համապատասխանաբար կիրառվում են 1, 3 կամ 20 միավոր նվազեցումները: Նվազեցումները կատարվում են լիազոր մարմնի կողմից՝ մասնագիտական հանձնաժողովի միջոցով՝ գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրությունների շրջանակներում կազմված եզրակացությունների հիման վրա:

3. 1 միավոր նվազեցումը կիրառվում է, եթե գնահատողն իր կազմած գնահատման հաշվետվությունում թույլ է տվել տեխնիկական կամ ձեւաբանական սխալ կամ վրիպակ, որը չի հանգեցնում կազմած գնահատման հաշվետվության անարժանահավատության եւ չի ազդում գնահատված արժեքի վրա: Ընդ որում, յուրաքանչյուր գնահատման հաշվետվության ուսումնասիրության ընթացքում սույն մասով սահմանված յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1-ական միավոր÷, իսկ նույն գնահատման հաշվետվության մեջ ամբողջությամբ նույն տեխնիկական կամ ձեւաբանական սխալը կամ վրիպակը մեկից ավելի անգամ կրկնվելու դեպքում, անկախ դրանց ընդհանուր քանակից, հանվում է 1 միավոր:

4. 3 միավոր նվազեցումը կիրառվում է, եթե գնահատողն իր կազմած գնահատման հաշվետվությունում թույլ է տվել մեթոդաբանական կամ վերլուծական այնպիսի խախտում, որը չի ազդել գնահատված արժեքի վրա: Սույն մասով նախատեսված հիմքով յուրաքանչյուր խախտման համար հանվում է 3-ական միավոր, ընդ որում, յուրաքանչյուր գնահատման հաշվետվության ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր սխալի համար հանվում է 3-ական միավոր: 3 միավորի նվազեցումը կիրառվում է նաեւ այն դեպքում, երբ գնահատողը չի կատարել սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով սահմանված պարտականությունը:

5. 20 միավոր նվազեցումը կատարվում է, եթե գնահատողը իր կազմած գնահատման հաշվետվությունում թույլ է տվել գնահատման արժեքի վրա ազդող սխալ կամ գնահատումն իրականացրել է շահերի բախման իրավիճակում:

6. Վկայականի գործողության կասեցման հիմքերն են՝

1) մեկ օրացուցային տարվա ընթացքում 7 ~~բալ~~միավոր նվազեցումը.

2) վկայականի գործողությունը կասեցնելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը.

3) պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ լինելու ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաեւ հանրային պաշտոնում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում՝ իր լիազորությունների ժամկետով.

4) գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամավճարը ~~երեք~~երկու ամիս անընդմեջ չվճարելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը համարվում է կասեցված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից լիազոր մարմին ներկայացված կասեցման դիմումի եւ անդամավճարը վճարված չլինելու մասին տեղեկանքի հիման վրա մինչեւ վճարումներն ամբողջությամբ կատարելը.

5) գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանը մեկ ամիս անընդմեջ չանդամակցելը մինչեւ անդամակցելը: Սույն կետի հիմքով որակավորման վկայականը կասեցվում է գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից լիազոր մարմին ներկայացված կասեցման դիմումի եւ անդամակցությունը դադարեցված լինելը հավաստող տեղեկանքի հիման վրա,

6) սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի «գ» եւ «դ» ենթակետերով ահմանված կարգով նախատեսված տեղեկատվությունը լիազոր մարմնին ոչ ամբողջական ներկայացնելը կամ չներկայացնելը~~,~~.

~~7.~~7. Վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցնում է լիազոր մարմինը՝ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցվում է նվազագույնը՝ մեկ ամիս ժամկետով, իսկ առավելագույնը՝ երկու տարի ժամկետով՝ սույն հոդվածի 20-րդ մասով սահմանված կարգով:

8. Սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված հիմքով վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցվում է անորոշ ժամկետով՝ մինչեւ հիմքերի պատշաճ վերացումը:

9. Վկայականի գործողությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանը (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը) այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկվում է համապատասխան որակավորված անձին՝ Կառավարության սահմանած կարգով Հաշվառման ծրագրի միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանն ուժի մեջ է մտնում Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ Հաշվառման ծրագրից տեղեկություններ ստանալու համար եւ լիազոր մարմնին անհապաղ գրավոր տեղեկացնել Հաշվառման ծրագրից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը համապատասխան հրամանը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է որակավորված անձին: Վկայականի գործողության կասեցման մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը լիազոր մարմնի պաշտոնական կայքում կատարվում է վկայականի գործողության կասեցման մասին նշում:

10. Վկայականի գործողության կասեցման ընթացքում գնահատողն իրավունք չունի իրականացնելու գնահատման գործունեություն, բացառությամբ նախքան վկայականի կասեցումը կնքված եւ գործող պայմանագրերի հիման վրա սույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-~~րդ~~ին կետով սահմանված դեպքերում պատվիրատուի կողմից պայմանագրով ստանձնած պարտականությունները կատարելու պահանջի հիմքով կատարված գնահատման գործունեության:

11. Վկայականի գործողության դադարեցման հիմքերն են՝

1) մեկ օրացուցային տարվա ընթացքում կամ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված խախտման հիմքով 20 ~~բալ~~միավոր նվազեցումը.

2) վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերում հետագայում հայտնաբերված կեղծ կամ խեղաթյուրված տվյալների առկայությունը.

3) որակավորված անձին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու կամ գնահատման գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը.

4) գնահատողի մահվան կամ նրան մահացած ճանաչելու մասին դատական ակտն ուժի մեջ մտնելը.

5) վկայականի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որակավորված անձի դիմումը.

6) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմանափակումը խախտելը.

7) վկայականի գործողության կասեցման ժամկետում սույն օրենքի իմաստով գնահատման գործունեություն իրականացնելը.

8) որակավորման վկայականի սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ~~ժամկետները~~ժամկետը լրանալը~~։~~:

~~12. Որակավորման վկայականի գործողությունը դադարեցվում է վկայականն ուժը կորցրած ճանաչելու միջոցով։~~

12. Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերի, ինչպես նաեւ Կառավարության սահմանած դեպքերում եւ կարգով լիազոր մարմինը ստեղծում է լիազոր մարմնի եւ գնահատման ինքնակարգավորվող կազմակերպությունների մասնակցությամբ հանձնաժողով, որի կազմը պետք է տարբերվի գործող մասնագիտական հանձնաժողովի կազմից եւ որի գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հանձնաժողովը ուսումնասիրելով գնահատման հաշվետվությունը եւ մասնագիտական հանձնաժողովի եզրակացությունը, քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ որոշում է արդյոք առկա են 20 միավոր նվազեցնելու հիմքեր: Քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի կազմում ներառված լիազոր մարմնի ներկայացուցիչներն

ունեն որոշիչ ձայնի իրավունք: Հանձնաժողովի նիստերն ուղիղ եթերով առցանց հեռարձակվում են լիազոր մարմնի պաշտոնական կայքում կամ սոցիալական ցանցի էջում: Հանձնաժողովի ցանկացած անդամ իրավունք ունի հայտնելու հատուկ կարծիք: Հանձնաժողովի եզրակացության հիման վրա կազմվում է ամփոփաթերթ, որը կցվում է վարչական վարույթի նյութերին: Որակավորման վկայականի գործողությունը դադարեցվում է վկայականն ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

13. Վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի՝ վկայականն ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանով դադարեցնում է լիազոր մարմինը՝ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

14. Վկայականն ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանը (այն ստորագրելու լիազորություն ունեցող անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված կամ տեսաներածված տարբերակը) այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ուղարկվում է համապատասխան որակավորված անձին՝ Հաշվառման ծրագրի միջոցով: Որակավորված անձը համարվում է հրամանի մասին պատշաճ ծանուցված այն Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Հրամանն ուժի մեջ է մտնում Հաշվառման ծրագրում տեղադրելու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրվանից: Որակավորված անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ Հաշվառման ծրագրից տեղեկություններ ստանալու համար եւ լիազոր մարմնին անհապաղ գրավոր տեղեկացնել Հաշվառման ծրագրից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման տեղեկություն ստանալու դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը համապատասխան հրամանը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում է որակավորված անձին: Վկայականն ուժը կորցրած ճանաչելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը լիազոր մարմնի պաշտոնական կայքում կատարվում է վկայականի գործողության դադարեցման մասին նշում:

15. ~~Վկայականի~~Ցանկացած կարգի գնահատողի որակավորման վկայականի գործողության դադարեցումից հետո ~~նոր վկայական ստանալու համար~~ անձը Կառավարության սահմանած կարգով կարող է դիմել

3-րդ կարգի գնահատողի որակավորման քննությանը մասնակցելու համար՝ ~~ցանկացած ժամանակ:~~վերջինիս վկայականի գործողության դադարեցումից երեք ամիս հետո, իսկ 1-ին եւ 2-րդ կարգի գնահատողի որակավորման վկայականի գործողության դադարեցումից հետո համապատասխանաբար նույն կարգի գնահատողի որակավորման քննություններին մասնակցելու համար՝ վկայականի գործողության դադարեցումից մեկ տարի հետո:

16. Վկայականն ուժը կորցրած ճանաչելու կամ գործողությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի հրամանները ենթակա են անհապաղ կատարման եւ դրանց դատական կարգով բողոքարկումը չի կասեցնում վիճարկվող հրամանի կատարումը:

17. Վկայականը կասեցնելու եւ դադարեցնելու մասին լիազոր մարմնի հրամանի պատճենը Հաշվառման ծրագրի միջոցով ուղարկվում է նաեւ գնահատման կազմակերպությանը:

18. Սույն հոդվածով սահմանված հիմքերով 6 միավոր եւ ավել նվազեցնելու դեպքում գնահատողը պարտավոր է անցնել մասնագիտական վերապատրաստում: Յուրաքանչյուր նվազեցված միավորի դիմաց գնահատողը պարտավոր է անցնել մեկական ժամ մասնագիտական վերապատրաստում:

19. Մասնագիտական վերապատրաստումն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների, հաշվառված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների, անհատական դասընթացների, ինչպես նաեւ միջազգային դասընթացներին մասնակցությամբ, որոնց արդյունքները, դասընթացների ժամաքանակը եւ ժամկետները պետք է ամրագրված լինեն դասընթացը կազմակերպողի հավաստագրով: Մասնագիտական վերապատրաստման նվազագույն պահանջները սահմանում է լիազոր մարմինը:

20. Համապատասխան ժամաքանակով մասնագիտական վերապատրաստումը հավաստող հավաստագրի ներկայացման դեպքում լիազոր մարմնի որոշմամբ գնահատողի որակավորման վկայականի կասեցումը վերացվում է: Ընդ որում, մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հավաստող հավաստագրի տրամադրման ժամկետը կարող է նաեւ նախորդել վկայականը կասեցնելու կամ միավորները նվազեցնելու ամսաթվին, բայց ոչ ավել քան այդ ամսաթվին նախորդող մեկ տարի ժամկետը: Գնահատողի կողմից

մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հավաստող հավաստագիրը լիազոր մարմին կարող է ներկայացվել վկայականի կասեցման հրամանն ուժի մեջ մտնելուց մեկ ամիս հետո՝ մինչեւ երկու տարին լրանալը: Վկայականը կասեցնելու մասին լիազոր մարմնի հրամանն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում սույն հոդվածով սահմանված կարգով մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցությունը հավաստող հավաստագիրը լիազոր մարմինին չներկայացնելու դեպքում վկայականի գործողությունը դադարեցվում օրենքի ուժով:»:

Հոդված ~~12~~13. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի.

1) 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2) ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտով, վաղաժամկետ դադարեցնում է մասնագիտական հանձնաժողովի գնահատող անդամի անդամակցությունը: Մասնագիտական հանձնաժողովի գնահատող անդամի անդամակցությունը վաղաժամկետ դադարում է գնահատողի որակավորման վկայականի գործողությունը դադարեցնելով կամ կասեցնելով, գնահատողին հաշվառումից հանելով, մասնագիտական հանձնաժողովի նիստերին երկու եւ ավելի անգամ անհարգելի բացակայելու դեպքերում.»

2) 7-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ա. գնահատման սուբյեկտների կամ շահառուների դիմումների հիման վրա կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ կատարում է գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրություններ՝ մասնագիտական հանձնաժողովի միջոցով, այդ թվում՝ գնահատված օբյեկտի արժեքի արժանահավատության, ինչպես նաեւ գնահատման հաշվետվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ գնահատման ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ, որոնք եզրափակվում են մասնագիտական հանձնաժողովի կողմից տրված ~~եզրակացության~~սույն օրենքով սահմանված եզրակացությունների հիման վրա՝ լիազոր մարմնի՝ վարչական վարույթը, համապատասխան դեպքով եւ հիմքերով, եզրափակելու մասին վարչական ակտ կայացնելով: Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը եւ կարգը սահմանում է

Կառավարությունը: Մասնագիտական հանձնաժողովի ~~կողմից ուսումնասիրության ենթակա չեն գնահատման հաշվետվությունները, որոնք~~մասնագիտական ուսումնասիրությունների առարկա չեն կարող լինել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված օտարվող սեփականության եւ դրա նկատմամբ գույքային իրավունքների գնահատման հաշվետվությունները: Մասնագիտական հանձնաժողովի կողմից ուսումնասիրության ենթակա չեն այն գնահատման հաշվետվությունները, որոնց կապակցությամբ լիազոր մարմնում առկա է տեղեկատվություն առ այն, որ դրանք դատարաններում քննության առարկա են կամ դատական քննության ընթացքում ներկայացվել են որպես ապացույց: Լիազոր մարմնի նախաձեռնությամբ մասնագիտական ուսումնասիրություններ իրականացնելու դեպքերը սահմանվում են գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգով.»,

3) 7-րդ կետը լրացնել նոր «գ-դ» ենթակետերով հետեւյալ բովանդակությամբ.

«գ. գնահատողներից կամ գնահատման կազմակերպություններից պահանջում է ներկայացնել գնահատման հաշվետվությունները, ինչպես նաեւ վերահսկողություն իրականացնելու համար լիազոր մարմնի պահանջած՝ գնահատման ստանդարտներով սահմանված գնահատման աշխատանքի ընթացքում ձեռք բերված հիմնական, նախնական տվյալները, բոլոր հաշվարկները, հետազոտության եւ վերլուծության արդյունքները, որոնց միջոցով կայացվել է արժեքի վերաբերյալ վերջնական եզրակացությունը: Պահանջված տեղեկատվությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու անհնարինության եւ նոր ժամկետ հայցելու վերաբերյալ գրավոր դիմումի հիման վրա լիազոր մարմինը, կատարման անհնարինությունը հաստատվելու դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է փաստաթղթերի ներկայացման նոր ժամկետ տրամադրելու մասին.

դ. գնահատման հաշվետվությունները, ինչպես նաեւ սույն կետի «գ» ենթակետում նշված տեղեկատվությունները ոչ ամբողջական ներկայացնելու դեպքում, գնահատողներին կամ գնահատման կազմակերպություններին տրամադրվում է երեք աշխատանքային օր՝ ճշգրտված տեղեկատվությունը կրկին ներկայացնելու համար.»:

Հոդված ~~13~~14.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից մեկ տարի հետո:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրամադրված՝ գնահատման գործունեության որակավորման վկայականները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո համարվելու են 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայականներ: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ~~մեկամսյա~~երկամսյա ժամկետում Կադաստրի կոմիտեն մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրամադրված գնահատման գործունեության որակավորման վկայականները վերածեւակերպում է 1-ին կարգի գնահատողի որակավորման վկայականների՝ տրամադրելով համապատասխան գնահատողներին:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը պետք է ընդունվեն ոչ ուշ քան սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, Կադաստրի կոմիտեն համապատասխան ենթաօրենսդրական ակտերը համապատասխանեցնում է սույն օրենքին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1224-22.12.2025-ՏՀ-011/1) ԵՎ ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1224[1]-22.12.2025-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1224-22.12.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի նոր 1-ին հոդվածի 1-ին մաս	Առաջարկում ենք Նախագծով «Գնահատման գործունեության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ Կառավարությանը գնահատման գործունեության ոլորտում ծրագրեր և հայեցակարգեր հաստատելու և իրականացնելու իրավասություն վերապահելու նպատակով՝ ոլորտում միասնական պետական քաղաքականության իրականացումը, բարեփոխումների շարունակականությունը և իրավական կարգավորման կանխատեսելիությունն ապահովելու համար:Նշված լրացման անհրաժեշտությունը պայմանավորված է գնահատման	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գործունեության ոլորտում պետական քաղաքականության համակարգված, շարունակական և կանխատեսելի իրականացման անհրաժեշտությամբ:		
2.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 1-14-րդ հոդվածներ	Նկատի ունենալով, որ Նախագիծը լրացվել է նոր 1-ին հոդվածով՝ առաջարկում ենք համապատասխանաբար վերանայել և ճշգրտել Նախագծի մյուս հոդվածների համարակալումը	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 2-րդ հոդվածի 1-ին մաս	Հաշվի առնելով, որ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնահատման գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերը ներառվում է գնահատման կազմակերպություն հասկացության մեջ՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ կետում «(այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող)» բառերը շարադրել «գնահատման կազմակերպություններին» բառերից հետո:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր	Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնահատումը նպատակաուղղված է գնահատման օբյեկտի արժեքի որոշմանը: Մինչդեռ Նախագծով «արժեքի որոշում» հասկացության փոխարեն «մասնագիտական կարծիքի ձևավորում» ձևակերպման նախատեսումը կարող է առաջացնել գնահատման էության և նպատակի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			վերաբերյալ տարընթերցումներ: Ուստի իրավական որոշակիությունն ապահովելու և գործող օրենքի կարգավորումների հետ հակասությունները բացառելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածից հանել 2-րդ և 3-րդ մասերը՝ անփոփոխ թողնելով Օրենքի գործող կարգավորումները:		
5.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 2-րդ հոդվածի 4-րդ մաս	Նկատի ունենալով, որ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ գնահատման հաշվետվությունների հաշվառման ծրագիր մուտքագրման ենթակա են Օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գնահատման պարտադիր դեպքերում կազմված անշարժ գույքի գնահատման հաշվետվությունների վերաբերյալ տվյալները, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող 11-րդ կետում «սահմանված» բառից հետո լրացնել «՝ անշարժ գույքի» բառերը, իսկ « նաեւ» բառից հետ «անշարժ գույքի» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 3-րդ հոդվածի 3-րդ մաս	Խմբագրական աշխատանքներով պայմանավորված առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում «մասով» բառը փոխարինել «մաս» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	Նախագծի լրամշակված	Առաջարկում ենք Նախագծով հստակ ամրագրել, որ գնահատողի կողմից պայմանագրի կնքումից հետո 5	Ընդունվել է:	Ընդունվել է:

		3-րդ հոդվածի 3-րդ մաս	աշխատանքային օրվա ընթացքում Հաշվառման ծրագիր պարտադիր մուտքագրման ենթակա է պայմանագիրը՝ անշարժ գույքի գնահատման դեպքում: Կարգավորումների իրավական հստակությունն ապահովելու, մուտքագրման ենթակա տվյալների շրջանակը հստակեցնելու և հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող նոր 1.1-ին մասում «պայմանագիրը» բառից հետո լրացնել «՝ անշարժ գույքի դեպքում,» բառերը, «համապատասխան» բառից հետո լրացնել «նույնականացնող տվյալներ պարունակող» բառերը, իսկ «մուտքագրման» բառից հետո՝ «անշարժ գույքի վերաբերյալ» բառերը:		
8.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 3-րդ հոդվածի 3-րդ մաս	Նկատի ունենալով, որ Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասով կատարվող լրացմամբ հստակ ամրագրվում է, որ գնահատման առաջադրանքը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի հավելվածը, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող նոր 1.1-ին մասում «մաս» բառը փոխարինել «հավելված» բառով, նույն մասի 2-րդ կետում «հավելվածը,» բառը փոխարինել «հավելված հանդիսացող» բառերով՝ Նախագծի դրույթների միջև ձևակերպումների	Ընդունվել է:	Ընդունվել է:

			միասնականությունը և իրավական հստակությունն ապահովելու նպատակով:		
9.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 3-րդ հոդվածի 4-րդ մաս	Գնահատման հաշվետվությունների հաշվառման միասնականությունը, դրանց նույնականացման հստակ մեխանիզմը և իրավական նշանակության միանշանակ ընկալումն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «2. Յուրաքանչյուր գնահատման հաշվետվություն կամ հաշվետվության վերաբերյալ տվյալներ Հաշվառման ծրագիր մուտքագրելիս ինքնաշխատ ձեւավորվում է հաշվետվությունը նույնականացնող անհատական ծածկագիր: Հաշվառման ծրագրում հաշվետվության տվյալների մուտքագրումը փաստում է հաշվետվության գոյության մասին: Հաշվետվության վերաբերյալ տվյալները Հաշվառման ծրագիր մուտքագրված չլինելու դեպքում տվյալ հաշվետվությունը չի կարող օգտագործվել որպես գնահատման հաշվետվություն:»:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 3-րդ հոդվածի 5-րդ մաս	Պետական մարմինների կողմից իրականացվող գաղտնի կամ հրապարակման ոչ ենթակա վարույթների, ուսումնասիրությունների կամ գործերի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			առանձնահատկությունները հաշվի առնելով, ինչպես նաև Հաշվառման ծրագիր տվյալների մուտքագրման պարտադիր պահանջների կիրառման շրջանակը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածում լրացնել նոր 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «5) 3-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդայությամբ. « Սույն հոդվածի 1.1-ին եւ 2-րդ մասերով սահմանված պահանջները չեն տարածվում պետական մարմինների կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գաղտնի կամ հրապարակման ոչ ենթական վարույթի, ուսումնասիրության կամ գործի շրջանակում պատվիրված եւ կազմված գնահատման հաշվետվությունների վրա: Սույն մասով սահմանված տվյալները Հաշվառման ծրագիր մուտքագրելու դեպքում պատասխանատվությունը կրում է գնահատողը:»»:		
11.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 4-րդ հոդվածի 2-րդ մաս	Մտքի շարադասական կապը և նախադասության սահունությունը պահպանելու նպատակով առաջարկում ենք՝ Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «մեջ» բառից հետո դրված «,» կետադրական նշանը փոխարինել «և» շաղկապով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

12.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 4-րդ հոդվածի 5-րդ մաս	Պայմանագրում պարտադիր ներառման ենթակա տեղեկությունների ներկայացման պահը հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասում «պատվիրատուի կողմից» բառերից հետո լրացնել« Պայմանագրի կնքման պահին» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 3-րդ հոդվածի 3-րդ մաս, լրամշակված 6-րդ հոդվածի 3-րդ մաս, լրամշակված 8-րդ հոդվածի 7-րդ, 11-րդ մասեր, լրամշակված 12-րդ հոդված	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում «հաշվառման» բառը փոխարինել «Հաշվառման» բառով, 6-րդ հոդվածի 3-րդ, 8-րդ հոդվածի 7-րդ և Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդվածի 9-րդ ու 14-րդ մասերում «ստորագրությամբ» բառերից առաջ լրացնել «թվային» բառը,	Ընդունվել է:	Ընդունվել է:
14.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 5-րդ հոդվածի 1-ին մաս	Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «աշխատանքային» բառը կիրառված է երկու անգամ, ուստի հղման հստակությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում «մասում» բառը փոխարինել «մասի առաջին նախադասությունում» բառերով՝ հստակ նշելու համար, որ լրացումը կատարվում է առաջին նախադասությունում կիրառված «աշխատանքային» բառից հետո: Բացի այդ,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հաշվի առնելով, որ Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ լիազոր մարմնի ղեկավարը սահմանում է գնահատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի վերաբերյալ տեղեկանքի ձևը, իրավահարաբերությունների կարգավորման միասնականությունն ու հստակությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք նույն մասով սահմանել նաև լիազոր մարմնի ղեկավարի կողմից ծառայությունների մատուցման պայմանագրի վերաբերյալ տեղեկանքի միասնական ձևի հաստատման լիազորություն:		
15.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 5-րդ հոդվածի 4-րդ մաս	Խմբագրական աշխատանքներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասում «մասերով» բառը փոխարինել «մասեր» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
16.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 5-րդ հոդվածի 6-րդ մաս	Վրիպակը շտկելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ մասում «հիմքով» բառից հետո լրացնել «բառով» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
17.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 6-րդ հոդվածի 4-րդ մաս	Առաջարկվող կարգավորումները հստակեցնելու, գնահատման գործընթացում օգտագործվող տվյալների աղբյուրների թույլատրելի շրջանակը և տվյալների համաժամանակյա թարմությունն ապահովելու, ինչպես նաև հետագա հնարավոր	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տարընթերցումները բացառելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «4) 5-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «1) օգտագործել վավերականությունը չհաստատված աղբյուրներից ստացված տվյալներ, ներառել գնահատման չհիմնավորված մեկնաբանություններ եւ եզրակացություններ, ինչպես նաեւ տվյալներ եւ տեղեկություններ, որոնք ստացվել են այլ գնահատման հաշվետվություն կազմելու նպատակով Հաշվառման ծրագրի կողմից գեներացված այլ քաղվածքի հիման վրա.»:		
18.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 7-րդ հոդվածի 1-ին մաս	Օրենքում առկա կարգավորումները հստակեցնելու, լիազոր մարմնի իրավասության շրջանակը հստակ սահմանելու և դատական վարույթին անուղղակիորեն միջամտելու հնարավոր ռիսկերը բացառելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասով Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոխ խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «1. Գնահատման հաշվետվության վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ գնահատման ստանդարտներին համապատասխանության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			խնդիրները կարող է պարզաբանել լիազոր մարմինը՝ նրան ուղղված գնահատման գործունեության սուբյեկտներից յուրաքանչյուրի կամ շահառուների դիմումի հիման վրա, կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ, բացառությամբ եթե լիազոր մարմնում առկա է տեղեկատվություն առ այն, որ գնահատման հաշվետվությունը դատարանում քննության առարկա է կամ դատական քննության ընթացքում ներկայացվել է որպես ապացույց, որոնց վերաբերյալ վեճերը լուծվում են դատական կարգով:»:		
19.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր	Առաջարկում ենք հստակեցնել, որ գնահատողի՝ գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստանալու իրավունքը ծագում է օրենքի ուժով՝ Հաշվառման ծրագրի կողմից յուրաքանչյուր գնահատման պատվերի համար համապատասխան քաղվածքի գեներացման պահից: Այդ նպատակով առաջարկում ենք՝ Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով լրացվող նոր 1.1-ին կետում «պատվիրատուի լիազորությամբ» բառերը փոխարինել «Հաշվառման ծրագրի կողմից գեներացված համապատասխան քաղվածքի հիման վրա»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բառերով, իսկ Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «2) լրացնել նոր 1.1-ին մաս հետեւյալ բովանդակությամբ. «1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված տեղեկություններ ստանալու իրավունքը ծագում է սույն օրենքի ուժով Հաշվառման ծրագրի կողմից համապատասխան քաղվածքի գեներացման պահից: Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների շտեմարաններին գնահատողների հասանելիության կարգը սահմանում է Կառավարությունը:»:		
20.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 8-րդ հոդվածի 3-րդ մաս	Հաշվի առնելով, որ Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների շտեմարաններին գնահատողների հասանելիության կարգը սահմանում է Կառավարությունը, իրավական հստակությունն ապահովելու և ներքին հակասությունները բացառելու նպատակով առաջարկում ենք՝ Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող նոր 2.1-ին կետից հանել « օրենքով սահմանված կարգով» բառերը, իսկ «վրա» բառից հետո լրացնել «Կառավարության սահմանած կարգով» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

21.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 8-րդ հոդվածի 4-րդ մաս	Գնահատման գործընթացում տեղեկատվության պարտադիրության, դրա արդյունքների արձանագրման համար գնահատողի պատասխանատվության, ինչպես նաև տեղեկատվության իրականացման անհնարինության կամ օրենքով սահմանված գաղտնի կամ հրապարակման ոչ ենթակա վարույթների շրջանակում գնահատման առանձնահատկությունները հստակեցնելու նպատակով՝ առաջարկում ենք՝ Նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «4) 3-րդ մասի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «1) գնահատումը կատարել սույն օրենքով, գնահատման ստանդարտներով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառապես գնահատվող օբյեկտի տեղեկատվության հիման վրա: Տեղեկատվության արդյունքների արձանագրման ճշգրտության եւ հիմնավորվածության համար պատասխանատվությունը կրում է գնահատողը: Եթե տեղեկատվություն իրականացնելիս որեւէ կերպ խոչընդոտվել է անշարժ գույք մուտք գործելը կամ գնահատման հաշվետվությունը պատվիրվել է պետական մարմինների կողմից	Ընդունվել է:	Ընդունվել է:

			իրականացվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գաղտնի կամ հրապարակման ոչ ենթական վարույթի, ուսումնասիրության կամ գործի շրջանակում, գնահատումն իրականացվում է Կառավարության սահմանած կարգով.»,»:		
22.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 8-րդ հոդվածի 5-րդ մաս	Գնահատման հաշվետվություններում օգտագործվող տվյալների արդիականությունը, համաժամանակյա թարմությունը և տվյալ գնահատման առարկայի հետ անմիջական կապը ապահովելու նպատակով՝առաջարկում ենք՝ Նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «5) 3-րդ մասում լրացնել նոր 1.1-ին կետ հետեւյալ բովանդակությամբ. «1.1) յուրաքանչյուր գնահատման հաշվետվություն կազմելիս օգտագործել բացառապես տվյալ հաշվետվության համար կատարված հարցման արդյունքում ձեռք բերված տվյալներ եւ տեղեկություններ.»,»: Նշված կարգավորումը նպատակ ունի բացառել այնպիսի իրավիճակները, երբ մեկ գնահատման համար ձեռք բերված տվյալները օգտագործվում են մեկ այլ գնահատման հաշվետվություն կազմելու նպատակով՝ առանց տվյալ գույքի վերաբերյալ տվյալների համաժամանակյա և արդիական ստացման:	Ընդունվել է:	Ընդունվել է:

23.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 8-րդ հոդվածի 7-րդ մաս	Խմբագրական ճշգրտումներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 7-րդ մասում «համարը» բառը փոխարինել «ծածկագիրը» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
24.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 12-րդ հոդված	Լիազոր մարմնի իրավասությունները, ընդունվող ակտերի շրջանակն ու բնույթը հստակեցնելու, ինչպես նաև միավորների նվազեցման ընթացակարգի վերաբերյալ հետագա հնարավոր տարընթերցումները բացառելու նպատակով՝ առաջարկում ենք՝ Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ. «Նվազեցումները կատարվում են լիազոր մարմնի կողմից՝ մասնագիտական հանձնաժողովի միջոցով՝ գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրությունների շրջանակներում կազմված եզրակացությունների հիման վրա:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
25.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 12-րդ հոդված	Առաջարկվող կարգավորումները հստակեցնելու և նույն գնահատման հաշվետվության մեջ նույնաբնույթ տեխնիկական կամ ձևաբանական սխալի կամ վրիպակի կրկնվելու դեպքում նույն սխալի համար կրկնակի պատասխանատվություն չկիրառելու նպատակով՝ առաջարկում ենք՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդվածի 3-րդ մասում «միավոր» բառից հետո լրացնել «, իսկ նույն գնահատման հաշվետվության մեջ ամբողջությամբ նույն տեխնիկական կամ ձեւաբանական սխալը կամ վրիպակը մեկից ավելի անգամ կրկնվելու դեպքում, անկախ դրանց ընդհանուր քանակից, հանվում է 1 միավոր:» բառերը:		
26.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 12-րդ	Նախագծի լրամշակված 8-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվող փոփոխությամբ գնահատողի համար սահմանվող նոր պարտականության չկատարման դեպքում համապատասխան սանկցիա նախատեսելու նպատակով առաջարկում ենքՆախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդվածի 4-րդ մասում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ . «3 միավորի նվազեցումը կիրառվում է նաև այն դեպքում, երբ գնահատողը չի կատարել սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետով սահմանված պարտականությունը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
27.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 12-րդ հոդված	Խմբագրական ճշգրտումներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 11-րդ մասի 1-ին կետերում «բալ» բառը փոխարինել «միավոր» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Բացի այդ, առաջարկում ենք իսկ նուն մասի 4-րդ կետում «երեք» բառը՝ «երկու» բառով՝ հաշվի առնելով, որ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության անդամավճարի չվճարումը կազմակերպության բնականոն գործունեության և անդամակցային պարտավորությունների պատշաճ կատարման վրա անմիջական ազդեցություն ունեցող հանգամանք է: Երկու ամիս անընդմեջ չվճարելու դեպքում որակավորման վկայականի կասեցման հնարավորություն նախատեսելը կապահովի առավել արդյունավետ կարգապահական և կազմակերպական վերահսկողություն՝ միաժամանակ թողնելով բավարար ժամկետ գնահատողի կողմից վճարային պարտավորությունը կատարելու համար:		
28.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 12-րդ հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որակավորման վկայականի գործողությունը կասեցվելու է լիազոր մարմնի ղեկավարի հրամանով, ինչպես նախատեսված է նաև վկայականի գործողության դադարեցման դեպքում՝ Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդվածի 13-րդ մասով, իրավական բացը բացառելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող	Ընդունվել է:	Ընդունվել է:

			22-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցնում է լիազոր մարմինը՝ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վկայականի գործողությունը լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կասեցվում է նվազագույնը՝ մեկ ամիս ժամկետով, իսկ առավելագույնը՝ երկու տարի ժամկետով՝ սույն հոդվածի 20-րդ մասով սահմանված կարգով:»:		
29.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 12-րդ հոդված	Խմբագրական ճշգրտումներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդվածի 10-րդ մասում «4.1-րդ» բառը փոխարինել «4.1-ին» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
30.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 12-րդ հոդված	Խմբագրական ճշգրտումներով պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետում «ժամկետները» բառը փոխարինել «ժամկետը» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
31.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 12-րդ	Հաշվի առնելով, որ 20 միավորի նվազեցումը հիմք է հանդիսանում գնահատողի որակավորման վկայականի գործողության	Ընդունվել է:	Ընդունվել է:

		հոդված	դադարեցման համար, օբյեկտիվության, թափանցիկության և բազմակողմանի մասնագիտական գնահատման լրացուցիչ երաշխիքներ ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 22-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «12. Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերի, ինչպես նաեւ Կառավարության սահմանած դեպքերում եւ կարգով լիազոր մարմինը ստեղծում է լիազոր մարմնի եւ գնահատման ինքնակարգավորվող կազմակերպությունների մասնակցությամբ հանձնաժողով, որի կազմը պետք է տարբերվի գործող մասնագիտական հանձնաժողովի կազմից եւ որի գործունեության կարգը սահմանում է Կառավարությունը: Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հանձնաժողովը ուսումնասիրելով գնահատման հաշվետվությունը եւ մասնագիտական հանձնաժողովի եզրակացությունը, քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ որոշում է արդյոք առկա են 20 միավոր նվազեցնելու հիմքեր: Քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի կազմում ներառված լիազոր մարմնի		

			ներկայացուցիչներն ունեն որոշիչ ձայնի իրավունք: : Հանձնաժողովի նիստերն ուղիղ եթերով առցանց հեռարձակվում են լիազոր մարմնի պաշտոնական կայքում կամ սոցիալական ցանցի էջում: Հանձնաժողովի ցանկացած անդամ իրավունք ունի հայտնելու հատուկ կարծիք: Հանձնաժողովի եզրակացության հիման վրա կազմվում է ամփոփաթերթ, որը կցվում է վարչական վարույթի նյութերին: Որակավորման վկայականի գործողությունը դադարեցվում է վկայականն ուժը կորցրած ճանաչելու միջոցով:»:		
32.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 12-րդ հոդված	Նախագծով հետապնդվող նպատակների արդյունավետ իրագործումն ու ոլորտում պատասխանատվության մակարդակի բարձրացումն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք Նախագծի 12-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր 22-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ «15. Ցանկացած կարգի գնահատողի որակավորման վկայականի գործողության դադարեցումից հետո անձը Կառավարության սահմանած կարգով կարող է դիմել 3-րդ կարգի գնահատողի որակավորման քննությանը մասնակցելու համար՝ վերջինիս վկայականի գործողության դադարեցումից երեք ամիս հետո, իսկ 1-ին և 2-րդ կարգի գնահատողի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			որակավորման վկայականի գործողության դադարեցումից հետո համապատասխանաբար նույն կարգի գնահատողի որակավորման քննություններին մասնակցելու համար՝ վկայականի գործողության դադարեցումից մեկ տարի հետո:»:		
33.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 13-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջինից երկրորդ ընթերցման փուլում Նախագծի քննարկումների արդյունքում անհրաժեշտություն է առաջացել լավարկել գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրությունների վերաբերյալ կարգավորումները՝ հստակեցնելով դրանց իրականացման հիմքերը, շրջանակը, և ընթացակարգային ձևը, ամրագրելով մասնագիտական հանձնաժողովի եզրակացության և լիազոր մարմնի վարչական ակտի միջև իրավական կապը, ինչպես նաև հիմք ընդունելով, որ 2026 թվականի փետրվարի 11-ի ՀՕ-32-Ն օրենքով Օրենքում կատարված լրացումը՝ առ այն, որ մասնագիտական հանձնաժողովի մասնագիտական ուսումնասիրությունների առարկա չեն կարող լինել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված օտարվող սեփականության և դրա նկատմամբ գույքային իրավունքների գնահատման հաշվետվությունները,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			առաջարկում ենք Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. « ա. գնահատման սուբյեկտների կամ շահառուների դիմումների հիման վրա կամ լիազոր մարմնի նախաձեռնությամբ կատարում է գնահատման հաշվետվությունների մասնագիտական ուսումնասիրություններ՝ մասնագիտական հանձնաժողովի միջոցով, այդ թվում՝ գնահատված օբյեկտի արժեքի արժանահավատության, ինչպես նաեւ գնահատման հաշվետվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը եւ գնահատման ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ, որոնք եզրափակվում են մասնագիտական հանձնաժողովի կողմից տրված սույն օրենքով սահմանված եզրակացությունների հիման վրա՝ լիազոր մարմնի՝ վարչական վարույթը, համապատասխան դեպքով և հիմքերով, եզրափակելու մասին վարչական ակտ կայացնելով: Գնահատման հաշվետվությունների ուսումնասիրության դեպքերը եւ կարգը սահմանում է Կառավարությունը: Մասնագիտական հանձնաժողովի մասնագիտական ուսումնասիրությունների առարկա չեն կարող		

			լինել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով նախատեսված օտարվող սեփականության և դրա նկատմամբ գույքային իրավունքների գնահատման հաշվետվությունները: Մասնագիտական հանձնաժողովի կողմից ուսումնասիրության ենթակա չեն այն գնահատման հաշվետվությունները, որոնց կապակցությամբ լիազոր մարմնում առկա է տեղեկատվություն առ այն, որ դրանք դատարաններում քննության առարկա են կամ դատական քննության ընթացքում ներկայացվել են որպես ապացույց: Լիազոր մարմնի նախաձեռնությամբ մասնագիտական ուսումնասիրություններ իրականացնելու դեպքերը սահմանվում են գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգով.»:		
34.	Կառավարություն	Նախագծի լրամշակված 14-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր	Նոր առաջարկվող փոփոխությունների ծավալով և դրանց գործնական կիրառումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասում «մեկամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով, ինչպես նաև նույն հոդվածում լրացնել նոր անցումային դրույթ առ այն, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Կադաստրի կոմիտեն համապատասխան ենթաօրենսդրական ակտերը պետք է համապատասխանեցնի օրենքին:		
««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1224[1]-22.12.2025-ՏՀ-011/1)					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Պետական տուրքի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասն արդեն իսկ պարունակում է 71-րդ կետ՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «71» թիվը փոխարինել «75» թվով:	Ընդունվել է:	Ընդունվել է: